«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ 2015Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Ռադիսոն Բլու հյուրանոց, «Արմենիա» դահլիճ
չորեքշաբթի, 01 հունիսի 2016թ., 12:00

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
43 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Արարատ Ղուկասյան
Գագիկ Զաքարյան (Նախագահ)

Բանկի Վարչություն
Վարդան Աթայան
Զաքար Բոյաջյան
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Մեսրոպ Հակոբյան
Դավիթ Պետրոսյան
Գուրգեն Ղուկասյան

Հրավիրվածներ
ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչներ
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական ընկերության ներկայացուցիչներ
Հայաստանի Բանկերի միության նախագահ Սամվել Ճզմաչյան
Միջազգային և հայաստանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ
Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը ժամը 12:00-ին և ողջունեց բոլոր բաժնետերերին և հյուրերին:
Գագիկ Զաքարյանը նշեց, որ 2015թ-ին Յունիբանկն առաջին անգամ Հայաստանի բանկային համակարգում առաջնային հրապարակային առաջարկի (IPO) միջոցով իրականացրեց բաժնետոմսերի բաշխում, դառնալով ավելի բաց և ժողովրդական բանկ, և IPO արդյունքում նոր բաժնետերերի քանակը կազմեց ավելի քան 180: Նշեց, որ այսօր առաջին անգամ համատեղ ներկայության կարգով գումարվում է Յունիբանկի որպես բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ժողով, ցանկացավ Յունիբանկի հետագա գործունեությունը զարգացնելու նպատակով առավել սերտ համագործակցություն հաստատել նոր բաժնետերերի հետ: Նշեց, որ արդեն գրեթե 15 տարի է, ինչ Յունիբանկն իրականացնում է գործունեություն Հայաստանի բանկային համակարգում և այսօրվա դրությամբ ունի կարևոր դեր բանկային համակարգում:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը Ժողովի քարտուղար նշանակեց Հաշվիչ հանձնաժողովի նահագահ Լ. Եղիազարյանին:Անցնելով Ժողովի պաշտոնական մասին՝ **Հաշվիչ հանձնաժողովի նահագահ Լ. Եղիազարյանը** ներկայացրեց, որ Ժողովի գումարման հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել էր «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել էին բաժնետերերին փոստի միջոցով:

Բաժնետերերի կողմից օրակարգում ներառելու համար այլ հարցեր չեն ներկայացվել:
01.06.2016թ. «Յունիբանկ» ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով:
Օրակարգի հարցերի վերաբերյալ նյութերը տեղադրվել էին Բանկի ինտերնետային կայքում Ժողովից 30 օր առաջ, ինչպես նաև տրամադրվում էին բաժնետերերին մինչև նիստի սկսելը, գրանցման ժամանակ:
Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկը կազմված է 2016թ. ապրիլի 16 դրությամբ:
Օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկներն ընդունելու ժամկետը ավարտվել է 30.05.2016թ., ժամը 10:00-ին: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել 30.05.2016թ.:
Բանկի քվեարկող տեղաբաշխված բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմեց 141.679.471 հատ, որից քվեարկությանը մասնակցել է 139.936.156 ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսեր, կամ տոկոսային հարաբերությամբ 98.77%-ը:
Քվորումն ապահովված է:

Հարց 1: «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. Ներքին աուդիտի հաշվետվության ներկայացում և հաստատում: Բանկի ներքին հսկողության համակարգի վերաբերյալ Ներքին աուդիտի եզրակացության ներկայացում:

Ներքին աուդիտի տնօրեն Հ. Սուվարյանը ներկայացրեց, որ հաշվետու տարվա ընթացքում աուդիտորական ստուգման են ենթարկվել թվով 35 մասնաճյուղ, որից թվով 12 մասնաճյուղերում իրականացվել է համալիր ստուգում, իսկ թվով 23 մասնաճյուղերում՝ կարճաժամկետ նպատակային ստուգում: Նշեց, որ վերհանված խնդիրների (թվով 55 հատ տեղային բնույթի խնդիրներ, թվով 17 հատ համակարգային բնույթի խնդիրներ) լուծման նպատակով կազմվել են միջոցառումների ծրագրեր՝ պատասխանատու ստորաբաժանումների/աշխատակիցների և ժամկետների (10-30 օր՝ կախված ռիսկի աստիճանից) սահմանմամբ, խնդիրների վերացման նպատակով իրականացվել է հետստուգում: Ներքին աուդիտի եզրակացությամբ, Բանկի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ժողովի նահագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Ներքին աուդիտի ատորաբաժանման աշխատակիցների քանակի վերաբերյալ, Ժողովի նահագահի հարցադրմանը, **Հ. Սուվարյանը** նշեց, որ աուդիտ մենեջերների քանակը կազմում է 6: **Գ. Զաքարյանն** անհրաժեշտ համարեց Խորհրդին ներկայացնել առաջարկություն Բանկի Ներքին Աուդիտում աշխատակիցների քանակի ավելացման վերաբերյալ՝ ստորաբաժանման կազմի ուժեղացման և աուդիտորական ստուգումների ծավալների ավելացման նպատակով:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> «Յունիբանկ» ԲԲԸ Ներքին աուդիտի հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

Կողմ - 139.908.756 ձայն (99.981%)
Դեմ – 0 ձայն
Ձեռնպահ - 17.400 ձայն (0.012%)
Անվավեր – 10.000 ձայն (0.007%)

Հարց 2: Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան հաշվետվության հաստատում:

Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Վ.Աթայանը ներկայացրեց Բանկի 2015թ. ֆինանսական ցուցանիշները: Նշեց, որ 2015 թվականը նոր ժամանաշրջան էր Յունիբանկի զարգացման և հետագա ռազմավարության համար: Գործունեության որակապես նոր մակարդակ և ծավալների աճ ապահովելու արդյունքում Յունիբանկը որոշում ընդունեց փակ բաժնետիրական ընկերությունից վերակազմավորվել բաց բաժնետիրական ընկերության և նախնական հրապարակային առաջարկի (IPO) միջոցով առաջին անգամ Հայաստանում իրականացնել բաժնետոմսերի թողարկում ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում: Բանկը տեղաբաշխեց մոտ 2,5 մլրդ ՀՀ դրամի բաժնետոմս՝ դառնալով էլ ավելի բաց և հանրային բանկ: Բաժնետերերի թիվը IPO-ի արդյունքում կազմեց 186, իսկ կանոնադրական կապիտալը համալրվեց մինչև 15,5 մլրդ ՀՀ դրամ: 2015թ-ին «Մերկուրի» ամենամյա մրցանակաբաշխությանը Յունիբանկը լավագույնը ճանաչվեց Հայաստանի «Ժողովրդական բանկ» անվանակարգում: Gallup International-ի հայկական ներկայացուցչության հարցման տվյալներով, Յունիբանկը բնակչության կողմից ճանաչվածությամբ ՀՀ բանկերի շարքում զբաղեցրեց երկրորդ տեղը:

25.12.2015թ-ին Moody's Investors Service միջազգային գործակալությունը հաստատեց Յունիբանկի բանկային ավանդների B2/NP, բազային վարկային գնահատականի b3, կոնտրագենտի ռիսկի գնահատականի B1(cr)/NP(cr) վարկանիշները:
Սպասարկման որակի կատարելագործման և բանկային ծառայությունների ընդլայնման շնորհիվ Բանկին հաջողվել է պահպանել և զգալիորեն ավելացնել հաճախորդների ընդհանուր քանակը: 2015թ. տարեվերջին գործող քարտերի քանակը կազմել է մոտ 185.000, բանկոմատների քանակը՝ 120, Pos-տերմինալների քանակը՝ 400: Սպասարկման կետերում շրջանառության ծավալը հասել է մոտ 73 մլրդ դրամի:

2015թ-ին շարունակվել են գործող մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքները՝ սպասարկման «մեկ պատուհանի» անցման նպատակով, այդ թվում քայլեր է ձեռնարկվում հաճախորդներին առավել հասանելի մինի-մասնաճյուղերի ստեղծման ուղղությամբ: Ներկայումս Բանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկում է 45 մասնաճյուղ :

Բանկն իր խոշոր հաճախորդների և բաժնետերերի համար, առավել հարմարավետ անհատական սպասարկման նպատակով, 2015թ. ներդրեց նոր «Պրիվե» նախագիծ:

2016թ.1-ին եռամսյակում Բանկն արդեն իսկ կատարել է Խորհրդի կողմից հաստատված 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրով նախատեսված պլանային ցուցանիշները, և Բանկի ղեկավարության ներկայիս հիմնական խնդիրն է իրագործել բոլոր անհրաժեշտ համալիր միջոցառումները այդ Ռազմավարական ծրագրի կատարման համար:

Բանկի 2015թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը տեղադրվել էր Բանկի ինտերնետային կայքում և նաև տրամադրվում էր բաժնետերերին մինչև նիստը՝ գրանցման ժամանակ:

Ժողովի նախագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:

Բաժնետերերի կողմից հարցեր տրվեցին ակտիվ քարտերի, օտարերկրյա բաժնետերերի թվաքանակի, ՀՀ ԿԲ կողմից նշանակված տույժերի, Բանկի ավանդային քաղաքականության վերաբերյալ:

Բանկի ընդհանուր 185.000 հատ քարտերի քանակից 80.000 ակտիվ քարտերի ցուցանիշը **Ժողովի նախագահ Գ. Զաքարյանը** համարեց անբավարար, հաշվի առնելով, որ 01.01.2016թ. դրությամբ Բանկի հաճախորդային բազան ներառում էր ավելի քան 282.000 հաճախորդ, և անհրաժեշտ համարեց Բանկի ղեկավարության կողմից ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցառումները հաճախորդային բազայում քարտապանների թվաքանակը ավելացնելու, մինչև 2016թ. ավարտը ակտիվ քարտերի քանակը առնվազն 2 անգամ ավելացնելու ուղղությամբ (որպես օրինակ նշեց Յունիբանկի քարտապանների համար զեղչերի և արտոնությունների նոր համակարգի ներդրման վերաբերյալ Խորհրդի որոշումը): Նշեց, որ անհրաժեշտ է հաճախորդների հետ անցկացնել բացատրական աշխատանքներ ակտիվ PR-արշավի ուղեկցմամբ՝ ապահովելու դեբետային քարտերով անկանխիկ գործարքների իրականացման առավելությունների և արտոնությունների վերաբերյալ քարտապանների իրացեկումը:

Ժողովի նախագահ Գ. Զաքարյանը շնորհակալություն հայտնեց Վարչությանը կատարված աշխատանքի համար, միաժամանակ նշելով 2016թ-ին Բանկի զարգացման ռազմավարության իրագործման համար առավել արդյունավետ քայլեր ձեռնարկելու անրաժեշտությունը՝ Բանկի եկամտաբերության բարձրացման, Բիզնես պլանով նախատեսված ցուցանիշների կատարման նպատակով: Կարևորեց նաև, պահպանելով հաստատված վարկային քաղաքականության սկզբունքները, շարունակել վարկային պորտֆելի դիվերսիֆիկացումը, մեծացնելով մանրածախ և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում, ինչը հաջողությամբ իրականացվել էր 2015թ-ին:

Բաժնետերերի ժողովը <u>հաստատեց</u> «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. գործունեության վերաբերյալ Վարչության հաշվետվությունը քվեարկության հետևյալ արդյունքներով՝

Կողմ - 139.901.156 ձայն (99.975%)
Դեմ – 0 ձայն
Ձեռնպահ - 25.000 ձայն (0.018%)
Անվավեր – 10.000 ձայն (0.007%)

Հարց 3: «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. ֆինանսական հաշվետվությունների հաստատում: «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ «Գրանթ Թորնթոն» աուդիտորական ընկերության եզրակացության ներկայացում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ Գ. Գրիգորյանը ներկայացրեց Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած Բանկի 2015 թվականի տարեկան հաշվետվությունները՝ հետևյալ հիմնական ցուցանիշներով.

1. ակտիվներ 158,139,860 հազ. ՀՀ դրամ
2. պարտավորություններ 135,430,768 հազ. ՀՀ դրամ
3. կապիտալ 22,709,092 հազ. ՀՀ դրամ
4. տոկոսային եկամուտներ 19,714,397 հազ. ՀՀ դրամ
5. տոկոսային ծախսեր (13,431,362) հազ. ՀՀ դրամ
6. այլ եկամուտներ 896.163 հազ. ՀՀ դրամ
7. շահույթը մինչև հարկվելը 1,383,757 հազ. ՀՀ դրամ
8. շահույթը տարվա կտրվածով 358,481 հազ. ՀՀ դրամ

2015թ. ընթացքում Բանկի դրամական հոսքերը բաղկացած են՝

1. Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները - 1,610,228 հազ. դրամ,
2. Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր – 10,647,727 հազ. դրամ
3. Դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից – (4,382,068) հազ. դրամ
4. Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից – (13,992, 043) հազ. դրամ
5. Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը կազմել է - (7,726,384) հազ. դրամ
6. Արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա (297,177) հազ. դրամ

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ - 34,036,384 հազ. դրամ
8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ - 26,012,823 հազ. դրամ:

Գ. Գրիգորյանը ներկայացրեց «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխանելու վերաբերյալ «Գրանթ Թորնթոն» անկախ աուդիտորական ընկերության եզրակացությունը, համաձայն որի «ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների»:

Ժողովի նախագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:
Բաժնետերերի ժողովը հաստատեց «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. ֆինանսական հաշվետվությունները քվեարկության հետևյալ արդյունքներով՝

Կողմ - 139.918.756 ձայն (99.988%)
Դեմ – 0 ձայն
Ձեռնպահ - 17.400 ձայն (0.012%)
Անվավեր –0 ձայն

Հարց 4: Խորհրդի անդամների ընտրություն և քանակական կազմի հաստատում:

Ժողովի քարտուղար Լ. Եղիազարյանը ներկայացրեց, որ համաձայն 16.04.2016թ. Խորհրդի որոշման, Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացվել էր Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ Խորհրդի հետևյալ առաջարկությունը՝

- Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներին և Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ **Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Արարատ Ղուկասյան, Հրահատ Արզումանյան:**

Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով - «Յունիբանկ» ԲԲԸ բաժնետեր «Գլովերի Հոլդինգ ԷլԹիԴի» ընկերության լիազոր ներկայացուցիչներ
Արարատ Ղուկասյան – հանդիսանում է Բանկի բաժնետեր
Էդուարդ Զամանյան – չի հանդիսանում Բանկի բաժնետեր
Հրահատ Արզումանյան – չի հանդիսանում Բանկի բաժնետեր

Ժողովի նահագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը որոշում ընդունեց, քվեարկության հետևյալ արդյունքներով, Խորհրդի քանակական կազմը թողնել անփոփոխ, վերընտրել Խորհրդի անդամներին և Խորհրդի կազմը հաստատել հետևյալ կերպ՝ **Գագիկ Զաքարյան, Գեորգի Պիսկով, Էդուարդ Զամանյան, Արարատ Ղուկասյան, Հրահատ Արզումանյան:**

Կողմ - 139.901.156 ձայն (99.975%)
Դեմ – 0 ձայն
Ձեռնպահ - 25.000 ձայն (0.018%)
Անվավեր –10.000 ձայն (0.007%)

Հարց 5: «Յունիբանկ» ԲԲԸ 2015թ. տարեկան ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման որոշման ընդունում:

Ժողովի քարտուղար Լ. Եղիազարյանը ներկայացրեց, որ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության Խորհուրդը, հաշվի առնելով 2015թ. ֆինանսական գործունեության արդյունքները, համաձայն 16.04.2016թ. որոշման, առաջարկել է «Յունիբանկ» ԲԲԸ Ընդհանուր բաժնետերերի ժողովին 2015թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժիններ չվճարել, հարկումից առաջ ձևավորված շահույթից իրականացնել հատկացում գլխավոր պահուստին 5% չափով:

Ժողովի նահագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:
Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, որոշում կայացրեց 2015թ. ֆինանսական արդյունքներով տարեկան շահութաբաժիններ չվճարել, հարկումից առաջ ձևավորված շահույթից իրականացնել հատկացում գլխավոր պահուստին 5% չափով:

Կողմ - 139.901.156 ձայն (99.975%)
Դեմ – 0 ձայն
Ձեռնպահ - 25.000 ձայն (0.018%)
Անվավեր –10.000 ձայն (0.007%)

Հարց 6: Բանկի 2016թ. ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն անցկացնող անձի հաստատում:

Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ Գ. Գրիգորյանը ներկայացրեց, որ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան 2016 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով Բանկի կողմից հայտարարվել էր մրցույթ, որին մասնակցության հայտ էին ներկայացրել թվով երկու ընկերություններ՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը և «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲ ընկերությունը:
Մրցութային հանձնաժողովի՝ Բանկի Վարչության կողմից մրցույթը անցկացվել և արդյունքներն ամփոփվել են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգով և Բանկի ներքին իրավական ակտով սահմանված պահանջներին համապատասխան:

12.04.2016թ. Վարչության որոշմամբ Բանկի 2016 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ներկայացված մրցութային առաջարկություններից մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը:

Հիմք ընդունելով մրցույթի արդյունքները՝ 16.04.2016թ. Խորհրդի որոշմամբ որպես Բանկի 2016թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացվում «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությունը:

Ժողովի նախագահը դիմեց մասնակիցներին ներկայացնելու իրենց հետաքրքրող հարցերը:
Հարցեր չներկայացվեցին:

Բաժնետերերի ժողովը, քվեարկության հետևյալ արդյունքներով, <u>որոշում ընդունեց</u> հաստատել «Գրանթ Թորնթոն» ՓԲ ընկերությանը որպես Բանկի 2016թ. արտաքին աուդիտն իրականացնող անձ:

Կողմ - 139.901.156 ձայն (99.975%)
Դեմ – 0 ձայն
Ձեռնպահ - 25.000 ձայն (0.018%)
Անվավեր –10.000 ձայն (0.007%)

Ժողովին նաև ելույթ ունեցավ **Հայաստանի Բանկերի Միության նախագահ Սամվել Ճզմաչյանը**: Նա մասնավորապես նշեց, որ Բանկը ընդունել է ռազմավարական որոշում վերակազմավորել բաց բաժնետիրական ընկերության և դարձել է ավելի թափանցիկ և ժողովրդական բանկ: Չնայած այն հանգամանքին, որ 2015թ. այդքան ել բարենպաստ տարի չէր տնտեսության համար, և, մասնավորապես, բանկային համակարգի համար, Յունիբանկին հաջողվեց տարվա արդյունքներով գրանցել շահույթ և ամրապնդել իր շուկայական դիրքերը մի շարք առանցքային բիզնես ուղղություններով: Ներդրողները ցուցաբերում են զգալի հետաքրքրություն Բանկի բաժնետոմսերի և պարտատոմսերի որպես երկարաժամկետ ներդրումային գործիքների նկատմամբ: Համոզմունք հայտնեց, որ Յունիբանկում, որպես ժողովրդական բանկում, բոլոր մինորիտար բաժնետերերի իրավունքներն առավելագույնս պաշտպանված կլինեն: Նեկայացրեց նաև, որ Բանկի ղեկավարությունն ակտիվորեն մասնակցում է Հայաստանի Բանկերի Միության աշխատանքներում, որոնք ուղղված են բանկային ոլորտում համակարգային խնդիրների լուծմանը և բանկային գործունեության միջավայրի բարելավմանը, որի համար շնորհակալություն հայտնեց Խորհրդի նախագահ Գ. Զաքարյանին և Վարչության նախագահ Վ. Աթայանին:
Ընդգծեց, որ Բանկի զարգացման դրական դինամիկան ակնառու է, և հաջողություն մաղթեց Բանկի ղեկավարությանը բոլոր նախատեսված ծրագրերի իրականացման գործում:

Ժողովի նախագահ **Գագիկ Զաքարյանը** շնորհակալություն հայտնեց Ժողովի մասնակիցներին, նշեց, որ Բանկի ղեկավարությունը կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները Յունիբանկը որպես ժողովրդական բանկ զարգացնելու ուղղությամբ և բաժնետերերը գոհունակ կլինեն Յունիբանկում ներդրում կատարելու իրենց ընտրությունից: Շնորհակալություն հայտնեց Ժողովի բոլոր մասնակիցներին, ղեկավարությանը, Բանկի բոլոր աշխատակիցներին՝ թիմային արդյունավետ աշխատանքի համար:

Օրակարգի հարցերի քննարկումն ավարտելու հետ կապված, Բաժնետերերի ժողովն ավարտվեց ժամը 13:00-ին:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Լուսինե Եղիազարյան** **Քարտուղար**

ք. Երևան, 8 հունիսի 2016թ.